«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Գեղարվեստական Տեքստի Միջոցով Հայրենասիրական Դաստիարակություն

ԱՌԱՐԿԱ՝ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ՝ Զեփյուռ Գևորգյան

ՄԱՐԶ՝ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝
Ծաղկահովիտի Ավ. Իսահակյանի անվան միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ .....

7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

.....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

Հայաստան ասելիս այտերս այրվում են,

Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,

Չգիտեմ՝ ինչու՞ է այսպես:

Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է,

Հայաստան ասելիս հասակս ծաղկում է,

Չգիտեմ՝ ինչու՞ է այսպես:

Հայաստան ասելիս աչքերս լցվում են,

Հայաստան ասելիս թևերս բացվում են,

Չգիտեմ՝ ինչու՞ է այդպես:

Հայաստան ասելիս աշխարհին իմ տունն է,

Հայաստան ասելիս էլ մահն ու՞մ շունն է.

Կլինե՛մ, կմնա՛մ այսպես:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ գործընթաց է և դրա ընկալումը բնութագրվում է ոչ միօրինակությամբ:

Այդ գործընթացը ներառում է պայմանների ամբողջությունը, համակարգը, բովանդակության բազմակողմանիությունը, արտահայտման ձևերի բազմազանությունը:

Հայրենասիրությունը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը ընդհանրապես և հայրենասիրությունը հատկապես մեզ՝ հայերիս համար այսօր ունի նոր հիմնախնդիրներ, որոնք պահանջում են նոր լուծումներ, նոր մոտեցումներ, նոր մեթոդներ: Մենք՝ հայերս, ունեցել ենք հերոսական պատմություն, ունեցել ենք և ունենք հայրենասեր նախնիներ ու նոր սերունդ որոնք իրենց կյանքի գնով մեզ են տվել մի բուռ հայրենիք՝ շրջապատված թշնամի հարևաններով, որոնք միշտ էլ հոշոտել և հոշոտում են մեր սուրբ հողը, տունը հայրենի, քաշում են մեզ հրի ու սրի:

Թանկ է մեր տունը, շենը, հողն ու ջուրը:

Եվ այն չեմ տա ոչ մեկին:

Մենք ձեզ հող չենք տա,

Այստեղ երգեր կան,

Այստեղ սխրանքն է հույսեր հրկիզել,

Այստեղ՝ շարքերում, սերընդե սերունդ

Նահատակներն են լեգենդներ դարձել:

Հայրենասիրական խնդիրը դիտարկվում է տարբեր հետազոտողների կողմից և կախված է անհատական քաղաքացիական դիրքորոշումից, սեփական հայրենիքի նկատմամբ վերաբերմունքից:

Յուրաքանչյուր անհատի, հատկապես մանկավարժների խնդիրն է իմանալ, ուսումնասիրել, ծանոթանալ թույլ տված բացթողումները, սխալները, և կատարելագործել այն հնարավորությունները համակարգում, որոնց միջոցով կարելի է հաղթահարել դրանք:

Այն առնչվում է այնպիսի հիմնախնդիրների հետ, ինչպիսիք են՝

- ազգային արժեքների, հայրենասիրական գաղափարների նկատմամբ անտարբերությունը, դրանց անտեսումը:
- քաղաքացիական դիրքորոշման պակասը:

Հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ հանրակրթական դպրոցների աշխատանքի տեսության և պրակտիկայի ուսումնասիրությունը թույլ է տվել վեր հանել

հակասություններ ժամանակակից պայմաններում սովորողների հայրենասիրական դաստիարակության արդիականության, հրատապության, հայրենիքի պաշտպանության համար յուրաքանչյուր պատանու, երիտասարդի, սովորողի մոտ հայրենասիրակայացմանը և զարգացմանը:

Հայրենասիրական դաստիարակությունն անմիջականորեն առնչվում է գեղարվեստական տեքստի վերլուծության, սովորողների մոտ բարձր հայրենասիրական գիտակցության, սեփական հայրենիքի նկատմամբ հավատարմության, ի շահ ծննդավայրի, հողի, ջրի, պետության հանդեպ իր սահմանադրական պարտականությունները կատարելու պատրաստակամության, հայրենիքի նկատմամբ հպարտության ձևավորման հետ:

Հայրենասիրական բովանդակությամբ տեքստերի վերլուծությունը զարգացման է աշակերտների մտածողությունը՝ նպաստելով հայրենասիրական դաստիարակությանը:

Մենք երդում ենք տվել ու տալիս ենք, թող բոլորն իմանան, որ մեզ համար նշանակալից ու կարգախոս է դարձել Մեծ հայրենասեր, սպարապետ Վարդան Մամիկոնյանի խոսքը `

«Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»...

Մենք՝ բոլորս մեծ թե փոքր, ասում ենք ու կասենք այնքան ժամանակ, քանի դեռ ունենք գերված Մասիս սար, լալահառաչ հոսող Մայր Արաքս ու Վանա լիճ, Դվին ու Կարս, Տարոն ու Սասուն:

Շունչդ տո՛ւր, հոգի՛դ, բա՛յց քո հայրենիք
Մի՛ տար թշնամյաց, ու անաշխարհիկ
Ընկնիլ սարեսար, լինիլ չարաչար,
Ծառա օտարաց կամ գերի անճար»:

Մեր, իմ ուսումնասիրության նպատակն է հետազոտել գեղարվեստական տեքստի շուրջ տարվող աշխատանքը՝ որպես հայրենասիրական դաստիարակությանը նպաստող միջոց:

Պետք է ուսուցումը լինի ուղղակի, զարգացնող, հարստացնի երեխայի գիտելիքները, ձևավորի ճանաչողական հետաքրքրություններ և կարողություններ: Պետք է դաստիարակել հայրենասիրություն, սեր երկրի, քաղաքի, մարդկանց նկատմամբ:

Իմ առջև խնդիր եմ դնում:

- բնութագրել հայրենասիրական դաստիարակությունը, դրա իմացական խնդիրները:
- ուսումնասիրել դրանց առանձնահատկությունները:
- ներկայացնել տեքստը՝ որպես հայրենասիրության ձևավորման:

- բացահայտել այն հմտությունները, որոնք աշակերտները դեռ կբերեն գեղարվեստական տեքստի վերլուծության ժամանակ:

Գրական ստեղծագործության վերլուծության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ուսուցանվող հայրենասիրական գաղափարներին, քանի որ այս տեսակ տեքստերը նպաստում են ոչ միայն տեքստի բովանդակության ճիշտ հասկանալուն այլև զարգացնում են և կատարելագործում են աշակերտների գեղարվեստական ճաշակը, բանավոր խոսքի նրբությունները և նրանց զինում է հայրենասիրությամբ:

Այն ո՞վ է ասում
Որ Արարատը ձերն է ու ձերը.
Անհեթեթ պատրա՛նք.
Քարտեզն է ձերը,
Քարտեզի վրա չափած-գծա՛ծը,
Իսկ ինքը՝ լե՛ռը...
Նրա ընկալմամբ են, որ հավերժության խորհուրդ են առնում,
Նրա պարուրող մշուշն ու ամպը
Մեր ընկալմա՛մբ են Եղեգան փողի ծուխ ու բոց դառնում.
Նրա ամեն մի անշունչ, անկենդան ավազահատը
Մեր արյան կարմիր գնդիկների՛ն են կենսահյութ տանում:
Մոխի՛րն է ձերը,
Սարը բաղադրող կոշկոռը քարե.
Մեզ համար գործող հրաբուխ է նա,
Խառնարա՛ն ոգու,
Որ դար ու դարեր
Մեր ընդվզումի կրակն է ժայթքում
Եվ բորբոքում մեր ցասու՛մը կենաց:
Սառու՛յցն է ձերը,
Սառը, անհաղորդ սառույցը դեղնած,
Իսկ մեզ՝ բյուրավոր արեգակների
Ներուժությու՛ն է անդուլ ճառագում նրա կողերից,
Որ տաքացնում է մի որջ հողագունդ

Այդ հողագնդին փռված-ծվարած մեր բեկորները:

Ս. Կապուտիկյան

2. Հայրենասիրական դաստիարակությունը դպրոցում

Բոլոր ժամանակների և հատկապես այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր՝ դաստիարակել հայրենասեր սերունդ:

Մեր հայրենիքի պաշտպանն ու պահապաններն այսօրվա դպրոցականներն են և նրանց մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր սիրով ու անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմերը, օրինակը՝ Արցախյան հերոսամարտը:

Դպրոցական տարիքում արժեքային կողմնորոշումները կարևորվում են անձի զարգացման տեսանկյունից:

Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում է այդ մարդու, դպրոցականի՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ:

Հայրենիքը, հայրենասիրությունը սկսվում է տանից – դպրոց – հասարակություն – երկիր:

Հայրենասիրությունը սեր է նվիրում, կյանքի իմաստ, ապրելու նպատակ: Այն սոցիալական դիրքորոշում է,որի հիմնական բաղադրիչը սերն է:

Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,

Դու սրտիս մեջ ես, ոչ լեզվիս վրա,

Իմ սրտի միջից, թե սիրտս ճեղքես՝

Դրոշիդ բոցը պիտի հուրհրա:

Աշակերտների հայրենասիրական դաստիարակության զարգացումը կատարվում է երեք փուլերով՝

1) կրտսեր դպրոց (I-IV դասարաններ) դրվում է հայրենասիրական պատկերացումների ձևավորման հիմքը:
2) հիմնական դպրոց (V-IX դասարաններ) ձևավորում է դպրոցականի հայրենասիրական մտածողությունը:
3) ավագ դպրոց (X- XII դասարաններ) ձևավորվում է աշակերտի հայրենասիրական գիտակցությունը:

Բոլոր դասարաններում էլ ուսուցչի աշխատանքը կայանում է նրանում, որ

- ձևավորել ուսուցման դրդապատճառները, զարգացնել կայուն ճանաչողական կարծիքներ և հետաքրքրություններ:
- զարգացնել համապատասխան հմտություններ:
- անհատական բնութագրերի, կարողությունների բացահայտում:
- զարգացնել վերահսկման, ինքնակազմակերպման և ինքնակարգավորման հմտություններ:
- համարժեք ինքնասիրության հաստատում ինքն իրեն և մյուսների նկատմամբ քննադատության զարգացում:
- արժեքային կողմնորոշումների զարգացում, սոցիալական կողմերի ձուլում:
- հասակակիցների հետ հաղորդակցման հմտությունների զարգացում, ընկերական ամուր կապերի հաստատում:

Դասագրքերում զետեղված գեղարվեստական տեքստերը մեծ նշանակություն ունեն երեխաների մոտ հայրենասիրական դաստիարակություն զարգացնելու գործում:

Հայրենիք մի սպասեք օտարից և ճակատագրից,եթե դա ձեր արյունով պաշտպանելու չափ հայրենասեր չեք: **-Գարեգին Նժդեհ**

Գեղարվեստական տեքստերի միջոցով աշակերտները ոչ միայն սովորում են կարդալ, հասկանալ կարդացածի իմաստը,պատմել այլև տեղեկություններ են ձեռք բերում Հայաստանի, հայ ժողովրդի հերոսական պատմության, սովորույթների, բնության, քաղաքների, մշակույթային արժեքների մասին ստանում են տարբեր աշխարհաճանաչողական գիտելիքներ («Սուրբ Էջմիածին», «Մասիսից դեպի Ագռավաքար», «Երեբունի-Երևան», «Անդրանիկ», «Աշուն»,« Տերևաթափ», «Ինչու՞ է նոյեմբերը գույնզգույն», «Լավաշը» և այլն) որոնց միջոցով զարգանում է աշակերտների գեղագիտական ճաշակը, մտածողությունը, բանավոր խոսքը:

Ռուս մեծ մանկավարժ Ուշինսկին ասել է՝. « Լեզուն լինելով ժողովրդի բազմադարյան և հոգևոր կյանքի ամենալիակատար և ստույգ տարեգրությունը, միաժամանակ ժողովրդի մեծագույն դաստիարակիչն է»:

Մայրենիի դասագրքերում ընդգրկված հայրենասիրական թեմաներով ստեղծագործությունների գաղափարների բացահայտումը նպատակային և գիտակցական:

Կարդալու ժամանակ աշակերտը ձգտում է հասկանալ թե ինչ՞ է ինքը կարդալու, ո՞րն է իր կարդացածի հիմնական գաղափարը: Նա կարդում է, վերլուծում է տեքստը:

Նա իր վրա է վերցնում կարդացածի իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու, իր խոսքը ցուցադրելու առաջատարի դերը:Նրան իր խորհուրդ ուղղորդումով օգնում է ուսուցիչը:

Օրինակ Հ. Մաթևոսյան «Այ քեզ բան. Ինչ կա-չկա, ինչ երևում-չի երևում՝ հայրենիք է» տեքստի վերլուծությունը կարելի է կազմակերպել այսպես.

Առաջին հատված. « Երբ մանուշակները բուրում են »

1. Այս հատվածի ընթերցումից ի՞նչ պարզվեց:

2. Որտեղի՞ց էր վերադարձել տղայի հայրը և ինչու՞ էր ուշացել:

3. Ի՞նչ եզրակացության եկաք: Ո՞ր տողերից արեցիք հետևությունները:

Երկրորդ հատված. « Ամեն ինչի դասատուն »

1. Ինչպե՞ս կբացատրեք _հանուն հայրենիքի_ արտահայտությունը:

- ամեն ինչի դասատուն

- հայրիկը

2. Հայրիկի համար որտեղի՞ց է սկսվում հայրենիքը (մեծերը, փոքրերը, քարը,

սարը, հողը, ջուրը, թռչունների երգը, սարերի ճամփան, ջրերի երգը)**:**

Երրորդ հատված. « Հորս ձեռքը թուլացած ընկավ ծնկին… »

Հիշեք ովքե՞ր են մարտնչել հանուն հայրենիքի:

Հոր և որդու զրույցում ինչ՞ զգացմունքներ են արտահայտված:

Դուք համաձայն ե՞ք, որ՝

ա) պատերազմը հեռու մարտադաշտում էր,

բ) էստեղ գյուղում կռիվ չկար,

գ) պատերազմին մասնակցում էին տղան, ամեն ինչի դասատուն, մայրիկը, ջրաղացը (հիմնավորեք պատասխանը):

Հայրենասիրական ստեղծագործությունների ընթերցումը, բացի կարդալու, վերարտադրելու կարողություններ ձևավորելուց, նպաստում է նաև երեխաների մտածողության զարգացմանը և եզրահանգումներ անելու ձևավորմանը, իրենց ինքնուրույն խոսքը ասելու համարձակությանը:

Բոլոր հայրենասիրական թեմաներով գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծությունը կարելի է անել այսպես.

1. Ստեղծագործության ընթերցում, որպեսզի ընկալեն ամբողջական բովանդակությունը:
2. Բացահայտել ստեղծագործության երևակայական կողմը:
3. Ստեղծագործության բարոյախոսական իմաստի վեր հանումը:
4. Ստեղծագործության լեզվի վերլուծությունը:

Աշակերտների հայրենասիրական դաստիարակության խնդիրների լուծման գլխավոր պայմանը նրանց կողմից ստեղծագործությունը խորությամբ հասկանալու, վերլուծելու, իրենց կարծիքը հայտնելու կարողությունն է:

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր պոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել, բայց մնացել ես պատանի,
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով
Մեծանաս դարով, Երևան:

Մենք արյան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք դեռ շատ:
Մեր կանչն առանց քեզ՝ իզուր կկորչի,
Առանց քեզ՝ մեր տաք տենչն էլ կսառչի:

Կյանքում ամեն սեր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզանով արբել,
Տաք է սերը մեր՝ շեկ քարերիդ պես,
Հին է սերը մեր՝ ձիգ դարերիդ պես:

Պ. Սևակ

Կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված մայրենի լեզվի տարրական դասարանների ծրագրում աշակերտների հայրենասիրական դաստիարակությանն ուղղված թեմաների ուսուցումը հատկացված է ընդհամենը 8-9 ժամ, ինչը դաս-դասարանային աշխատանքի իրացման ընթացքում լիարժեք հնարավորություն չի ապահովում սովորողի ռազմահայրենասիրական դաստիարակության համար: Ուստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծումը մենք իրականացնում ենք դասարանական աշխատանքի շարունակությունը համարվող արտադասարանական պարապմունքներով, որոնք անմիջականորեն կապված են դասարանում կատարվող աշխատանքների հետ:

Խմբային աշխատանք

Խմբերից յուրաքանչյուրին տալիս է Արարտի, Սևանի, Երևանի նկարները:

Հույսից ծնված դու լույս-աղբյուր,
Վանա լճի հարազատ քույր,
Դու սարերում մեր երկնահաս
Կապույտով լի հսկա մի թաս:

Պ. Խաչատրյան

Հայրենիքը սիրում ես ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է:

Սենեկա

Նա, ով չի սիրում իր հայրենիքը, ոչինչ չի սիրում:

Ջորջ Բայրոն

Մեծ մանկավարժ Վ. Սուխոմլինսկին մանկավարժական երկարատև տարիների իր գործունեության մասին խոսելիս նշել է. << ճանապարհորդություններ կատարել դեպի մեր հայրենիքի վեհության, պատվի, փառքի, անկախության համար կատարված սխրանքների աշխարհը >>:

Հետևելով մեծ մանկավարժի պատգամներին՝ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացնում ենք դաստիարակության կենսագործման դասարանական և արտադասարանական աշխատանքների զանազան ուղիներով՝ դրական օրինակով, հայրենիքի մասին զրույցներով, գրական ստեղծագործությունների վերլուծություններով, միջառարկային և ներառարկային կապեր ստեղծելով և այլն: Կիրառում ենք նաև արտադասարանական տարբեր միջոցառումներ, արցախյան պատերազմի հերոսների, ռազմական մարտերի մասին ականատեսների վկայուն հիշողություններ, սովորողները ճանաչում են արցախյան պատերազմի հերոսներին, ծանոթանում են ռազմական մարտերի մասնակիցների վերապրած հիշողություններին, էքսկուրսիաների, արշավների իրականացում, երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը, սիրում հայրենի հողը, մասնակցություն ազգային տոներին, սովորողները ճանաչում են ազգային տոները, անձամբ մասնակցում տոնակատարություններին, զրույց, դասախոսություն, բանավեճ. աշակերտները փոխանակում են հայրենասիրական գաղափարներ, հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները, բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ, արցախյան թեմաներով կինոդիտում. փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին, հայրենասիրական թեմաներով ցերեկույթներ, վիկտորինաներ. սովորողներն անձամբ մասնակցում են միջոցառումների կազմակերպմանն ու ներկայացմանը, ապահովվում է առողջ մրցակցություն:

Սովորողի հայրենասիրական դաստիարակության առաջին փուլում կարևորվում է աշակերտների՝ հայրենիքի մասին ունեցած պատկերացումների ձևավորումն ու ամբողջացումը: Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝ նպաստելով երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, և ամենևին էլ պատահական չէ, որ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խրախուսվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը: Հանրակրթության 2 - րդ աստիճանում հիմնական դպրոցի սովորողների հայրենասիրական մտածողության զարգացման համար ի նպաստ են դրվում ուսումնական տարբեր բնագավառների ընձեռած հնարավորությունները:

Գրականությունը և պատմությունը կյանքի դասեր են ուսուցանում սովորողներին, զարգացնում նրանց ստեղծագործական, վերլուծական ակտիվությունը և դաստիարակում ինքնատիպ անհատականություններ:

Իսկ մյուս ուսումնական առարկաները (<>, <>, ՏՀՏ և այլն) ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման համատեքստում հարուստ նյութ են տալիս ինտեգրված դասեր անցկացնելու համար:

Դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման գործընթացը ուսումնական գործընթացի սուբյեկտների փոխգործակցության արդյունք է, որի արդյունավետությունը պայմանավորված է և արժեքների յուրացման նկատմամբ սովորողների գործունեությամբ, և այդ գործընթացը կազմակերպող ուսուցչի փորձառությամբ: Արժեքային կողմնորոշումները կարևորվում են առաջին հերթին անձի զարգացման տեսանկյունից:

Դպրոցականների զարգացման գործընթացում հոգեբանական խորքային փոփոխությունները վկայում են նշված տարիքային փուլում երեխայի զարգացման լայն հնարավորությունների մասին: Այս ժամանակահատվածում երեխայի զարգացման ներուժն իրականացվում է՝ ճանաչելով շրջակա աշխարհը, ձեռք բերելով հասարակական գործունեության իր սեփական փորձը: Ուսումնական գործընթացը ձևավորվում է ոչ միայն արժեքային կողմնորոշումներ, այլև արժեքային կողմնորոշումներ, այլև արժեքային – գնահատողական վերաբերմունք բոլորի, այդ թվում՝ ընտանիքի անդամների նկատմամբ:

4.Եզրակացություն

Այսպիսով ՝ սովորողների հայրենասիրական դաստիարակության, նրանց արժեհամակարգի ձևավորման գլխավորող պայմանը նրանց կողմից գեղարվեստական տեքստը խորությամբ հասկանալու, վերլուծելու կարողությունն է: Նրանք որպեսզի կարողանան ընկալել ստեղծագործության գեղագիտական և բարոյական արժեքները անհրաժեշտ է

- խորհեն բնագրի շուրջը,
- հերոսներին «բերեն» իրական կյանք,
- գնահատեն նրանց արարքները,
- նրանց և իրենց մեջ գտնեն նմանություն և տարբերություն
- իմաստավորեն իրենց խնդիրները:

Դպրոցական միջավայրում ամեն աշակերտ, անկախ իր ստացածդաստիարակությունից, լցվում է հայրենասիրությամբ, ճանաչում է մեր պատմությունը, մշակույթի գանձերը և հասկանում է, որ ինքն է դրանց ժառանգորդը և փոխանցողը մյուս սերունդներին:

5 .Գրականության Ցանկ

1.Վ. Սարգսյան և ուրիշներ, Մայրենի Ս., Երևան 2016թ.

2. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. ձ., 1959թ.

3. Անանև - անհատականության հոգեբանական կառուցվածքը և դրա ձևավորումը գործընթացում: Մոսկվա 1976թ.

4. Նալչաջյան Հոգեբանական բառարան: Երևան, 1984թ.